

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դինը 10 րուր, կես տարվանը 6 րուր:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից համարադրական մէջ:

Օտարադարձարարի դիմում են ուղարկել
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր րուրին 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ի Մ Ե Կ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով:
ՊՐՕԳՐԱՄԱՆ. I. Տեղութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիտոն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 րուր է, կէս տարվան 6 ր., իւրաքանչիւր ամսին 1 րուր: Հատով համարները 5 կոպեկ:
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցեով. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «ПОРЯДОКЪ» Լրագրի թղթակցութիւնը: Խառն և Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր — ՀԵՌԱԳԻՆԸ: — ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Հայոց վանքը Երուսաղէմում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» վաղվայ համարից կը շարունակենք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՍՈՒՄ

Ձը նայելով, որ դարերի ընթացքում հայոց բարեկալիքը ժողովուրդը իր հարստութիւնը ընծայել է Երուսաղէմի վանքին, — այդ վանքի կառավարիչները դարձեալ իրանց միջոց աղքատ են ձևացրել և միշտ դիմել են ազգի օգնութեանը իրանց պարտքերը վճարելու համար: Ով որ ուշի ուշով ուսումնասիրել է Երուսաղէմի պատմութիւնը, կը գտնէ այդ մասին շատ փաստեր: Եւ կը յիշեմ մի քանիսը միայն: Բայց զարմանալին այն է, որ մի և նոյն ժամանակ, երբ վանքը ազգից դրամական օժանդակութիւն է խնդրել, այնտեղ թաղարքած են եղել անպակի գանձեր:

Երուսաղէմի Աստուածատուր պատրիարքի օրերում, յոյն կղերք, կաշառելով սուլթանի բոյի-նի-էյրի (ծովից) Մուհամմէտ փաշայ անունով վեզիրին, խից հայ աբեղաների ձեռքից Երուսաղէմի ուխտատեղիները, որոնց թուում և սուրբ Յակոբայ վանքը, Այդ միջոցին յիշեալ Աստուածատուր պատրիարքը ստիպվեցաւ գալ Կ. Պոլսի, դիմել ազգի օգնութեանը, որ դրամով և գործով օժանդակեն իրան, որպէս զի ինքն ևս յոյների նման կաշառեցին տալով, կարողանայ յետ խել նրանց ձեռքից հայոց սրբավայրերը: Նա զեղբուրում էր հայոց իշխանների, հարուստների և եկեղեցիների ղեռնարկում և հանգանակութիւն էր հաւաքում: Այդ միջոցին նա անթափելի նշխարաւ վարդապետին Կ. Պոլսից ուղարկեց Երուսաղէմ, որպէս իր փոխանորդ, մինչև ինքը մայրաքաղաքում կը կարգադրէր գործերը: Նշխարաւ գալով Երուսաղէմ, վանքը գտնում է սաստիկ աղքատութեան մէջ և որամի կարօտ: Հարպիկ նշխարաւ բերքում է պատրիարքի թղթերը (որ Կ. Պոլսում ազգից օժանդակութիւն էր խնդրում) և գտնում է մի առեւտրի մէջ գրված. «այսի-

տպագրել մեր աշխատակից պ. Բաֆֆիի «Կա-լիթ Բէկ» վեպը, որի տպագրելը ընդմիջվեցաւ հեղինակի ճանապարհորդութեան պատճառով: Դարաբաղի մէջ, որտեղ նա ուսումնասիրելու էր գնացել Կալիթ Բէկի մասին եղած աւանդու-թիւնները և անձամբ ծանօթանալու երկրի ղեռ-քերի հետ:

Արծրունու գաղթելու եղած ընթերցարանը տեղափոխվում է այն խանութը, որտեղ առաջ գտնվում էր «Կենտրոնական գրադաճառանոցը»: Ընթերցարանը և գրադարանը ընդարձակվում է և ստանալու է այսուհետեւ ոչ թէ միայն Ռուսաստանում հրատարակվող բոլոր ամենանշանա-

տակ մոմ այսքան, ղեղին մոմ այսքան: Տեղեկ լինելով վանականների սովորական խորամանկու-թիւններին, նա իսկույն հասկանում է այդ հաշ-ւի գաղտնիքը և սկսում է որոնել «մոմերը»: Ինչ է դուրս գալիս: Պատրիարքի կացարանի մէջ գտնում է երկու պղնձե լոթոններ (փոք-րիկ կարաս) մէկի մէջ լցրած «ղեղին մոմի» փո-խաբէն ղեղին ոսկի, իսկ միւսի մէջ «սպիտակ մոմի» փոխաբէն: Եւ իսկույն կախովի կոտոր-ւում է ինչպէս իշխել Երուսաղէմում: Եւ համարեա այն օրից սկսվում է մի շարունակ կռիւ Երուսաղէ-մի և Կ. Պոլսի պատրիարքութիւնների մէջ մի կողմից, իսկ Երուսաղէմի և միւս կաթողիկոսա-րաններին մէջ միւս կողմից: Այդ կռիւները դա-րեւով տանկում են արեւ ազգը, պատճառել են նրան անպակի բարոյական և նիւթական վը-նանքներ և զբաղեցրել են ժողովուրդին անհայտ երկպառակութիւններով: Պատրիարքները, կա-թողիկոսները, իրանց փառասիրութիւնը և ըն-չաքաղցրութիւնը յագեցնելու համար, յափշտա-կում էին միմեանցից աթոռներ, կռուում էին մի-մեանց հետ, իսկ ժողովուրդը մէջ տեղում մաշ-վում էր: Պատրիարքական ծախքերը, որ տրվում էին սուլթաններին ու մահմետական պաշտօնա-կաններին որպէս կաշառք, ժողովուրդին էին տու-մել տալիս, ի հարկէ, եկեղեցական հանգանա-կութեան անուանով:

Եւ կը յիշեմ մի աղէտալի անցք, որ պատա-հեց Գեօփրուլու Մուհամմէդ կոչված մեծ վեզիրի օրերում: Այդ այն ժամանակ էր, երբ Կ. Պոլսի յունաց Բարթեմիոս պատրիարքը շատապարտ-վեցաւ իբրեւ թիւրքաց կառավարութեան դաւա-ճան և իր պատրիարքական զգեստով կախաղա-ւոր լրագիրներն ու ամսագիրները, բայց և օ-տարազգի հրատարակութիւնները շատերը:

Եւ իրագրիւններն ու ամսագիրները, բայց և օ-տարազգի հրատարակութիւնները շատերը:

Լսում ենք որ յունար ամսից 1882 թւի պ. Սիմէոն Հախումեան ղեկավարութիւն ունի հրա-տարակելու Շուշի քաղաքում մի հայերէն ամսա-գիր «Գործ» անունով: «Գործի» իւրաքանչիւր հա-մարը բաղկացած կը լինի 5—6 թերթից (80—96 երեսից) և դուրս կը գալ իւրաքանչիւր ամսի վերջում: Ամսագրի պրոպագանդ, որի հետ կը ծա-նօթանանք ընթերցողներին, շատ լաւ է կազմ-ված: Ամսագը արագ ցանկանում ենք աջողու-թիւն պ. Հախումեանցին իր սկսած ձեռնար-կութեան մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒ-ԹԻՒՆԸ

Բերլինից „ПОРЯДОКЪ“ Լրագրին գրում են հետեւեալը: Վերջին նամակով ես ար-դէն ասացի, որ ոչ ընդդիմադրականները և ոչ հասարակութիւնը չեն կորցրել համար-ձակութիւնը կայսերական հրովարտակի պատճառով: Այդ հանդիմանքը ապացուց-վում է բազմաթիւ գրական փաստերով: Բայեստագի բացվելուց, հետեւապէս և կայսերական հրովարտակի հրատարակուց յետոյ առաջին լրագրացի ընտրութիւնը կատարվեցաւ Կօբուրդի մէջ: Այնտեղ ա-զատամիտների կառուցված պրօֆէսոր Մօմ-

նի վրա բարձրացաւ Բարմաի-կափու. կոչված տեղում:

Այդ միջոցին Կ. Պոլսի հայոց պատրիարքի ընտրութեան համար մեծ խռովութիւն կար ժո-ղովուրդի մէջ: Բերլինցի փառասէր թօմաս վար-դապետը աշխատում էր պատրիարք լինել ժո-ղովուրդը չէր ընդունում: Նրա հակառակորդ-ները դիմեցին մեծ վեզիրին, խոստացան վճարել իւրաքանչիւր տարի 140,000 ստակ, *) միայն թէ թօմասը պատրիարք չը լինի, այլ թոյլ տըր-վել ընտրել իրանց ցանկացած անձին: Այդ երբ տե-սաւ թօմասը, ինքն ինչպէս դիմեց մեծ վեզիրի մօտ, խոստացաւ վճարել իւրաքանչիւր տարի 400,000 ստակ, որ Բ. Դուռը իրան հաստատէ Կ. Պոլ-սի պատրիարք, այն նոր իրաւասութեամբ, որ Երուսաղէմի պատրիարքն ևս ենթարկվի իր իշ-խանութեանը: Գուհարի խոշորութիւնը հրապու-րեց մեծ վեզիրին մեծ ժողովուրդի պահանջը և թօմասին սուլթանի բերաթով հատուտել Կ. Պոլսի պատրիարք, այլ և Երուսաղէմի պատ-րիարքի վրա գերիշխանութիւն շնորհել: Թօմա-սը իր կաշառքով զրաւած աթոռը պահպանե-լու համար յըջապատեց իր պատրիարքարանը մի խումբ թիւրք գնդապետներով, որոնց թօյակը ինքն էր տալիս, ամեն օր 20 «քսակ» ար-ծաթ:

Թօմասի մի այսպիսի բռնակալութիւնը գրգռեց ժողովուրդի բարեկամները մի կողմից, և Երու-սաղէմի Աստուածատուր պատրիարքի նախանձը միւս կողմից, երբ վերջին տեսաւ, որ թօմասը սուլթանի հրամանով իր վրա գերիշխանութիւն ստացաւ: (Կա մեր վերև յիշած մի և նոյն Աս-տուածատուր պատրիարքն էր, որ երկու պղնձե լոթոններին մէջ մօմի անունով թաղցրել էր ոսկին ու արծաթը): Կա միաբանվեցաւ թօմասի հակառակորդներին հետ, թուղթ գրեցին, ստո-րագրեցին, երդուեցան, ուխտ դրեցին, որ ամեն միջոցներ գործ դնեն թօմասին ոչնչացնելու հա-

*) Բ. Դուռը մինչև այսօր մի որոշ տուրք է ստանում պատրիարքից նրա ընտրութեան բէ-րաթը հաստատելու համար:

զինն էր, որ առաջինը համարձակվեցաւ բացարձակ յայտնել, թէ պետական կանց-լերը իր քաղաքականութեամբ փոս է փո-րում Հօհենցօլերների ընտանիքին: Եւ զի-տէք, թէ ընտրութիւնները ինչպիսի հե-տեւանքներ ունեցան. ընդամենը եղել են 5,168 քուէներ և նրանցից 5,059 քուէ տուած է Մօմգինի համար և միայն 62 քուէ նրա պահպանողական հակառակորդի համար: Մի շարքից յետոյ Բերլինի ըն-տրողական երկու շրջանի մէջ էլ կայացան ընտրութիւններ: Պահպանողականները ա-ռաջարկեցին պաշտօնական գիտութեան աստղ պրօֆէսոր Արօֆ վագներին: Ան-կարելի է նկարագրել, թէ պահպանողա-կանները այդ շարքից ընթացքում ի՞նչ էին անում և ի՞նչ էին խօսում, թէ ինչ-պէս մեկնում էին կայսերական հրովարտա-կը, ապացուցանելով, որ նա կատարելապէս համարաշխ է՝ պահպանողականների նախա-գծի հետ: Հետեւանք այն էր, որ քուէնե-րի ամենամեծ մեծամասնութիւնը դար-ձեալ առաջադէմների կողմն էր: Պահպա-նողականների ստացած քուէների թիւը 5,600-ից հօկտեմբերի 27-ին քչացաւ մի-ջև 3,800: Փաստաբան առաջադէմ Մուսկել ստացաւ 11,000 քուէներից աւելի: Ո՞վ է այդ Մուսկել և ի՞նչ իրաւունքներ ունի ներկայացուցիչ լինելու համար, կամ ըն-տրողների հաւատարմութիւնը վայելելու:

մար: Կաշառքները չօգնեցին, որովհետեւ որքան դրանք էին տալիս, թօմասը կրկնապատիկ աւե-լի էր տալիս: Մտածեցին մասնել թօմասին, ամ-րաստանելով նրան որպէս քաղաքական յան-ցաւոր, իբր թէ նա «հրանկներ» հետ գաղտնի յարաբերութիւններ ունի, ահաբեկեան զէս որո-գալովներ է լարում և այլն: Մտնութիւնը հասց-րեց նրանց ցանկացած նպատակին, և որովհետեւ յունաց պատրիարքի անցըր դեռ նոր էր, կառա-վարութիւնը թօմասին կաշառաւորեց և գրեց մա-հապարտների բանտը:

Այդ միջոցին թօմասի կուսակիցները յուսա-հատ կերպով թիւրքաց պաշտօնատարների զըռ-ներում դեգերում էին, անպակի գումարներ էին ծախսում, որ մի կերպով ազատեն նրան: Բայց թօմասի հակառակորդները աւելի ճարպիկ գը-տնվեցան. նրանք կաշառեցին մեծ վեզիրի փո-խանորդ Սիման փաշային, և նրա գիտութեամբ, բանտի պահպանների ձեռքով, սուրճի մէջ թոյն խառնելով, սպանեցին թօմասին: Պատ-րիարքի մարմինը մի քանի օր մնաց անթաղ, բանտի դռան հրապարակի վրա ընկած, յետոյ ձգեցին ծովը:

Կրանով չը վերջացաւ խռովութիւնը: Երկար ժամանակ թօմասի կուսակիցների և նրա հակա-ռակորդների մէջ էր լարւել շարունակվում էր: Վեր-ջիններից շատերը բանտարկվեցան որպէս մար-դասպաններ: Անդադար միւս միայն ամբաստա-նելով, կաշառաւորել էր տալիս, և այդ աւելի շահաւէտ էր թիւրք պաշտօնատարներին, որով-հետեւ ամեն անգամ անպակի տուգանքներ ու կաշառքներ էին ստանում:

Կեռ յիշեալ երկպառակութիւնները չէին վեր-ջացած, կռիւը ընկաւ թօմասի հակառակորդ-ների և Երուսաղէմի Աստուածատուր պատրիար-գի մէջ: Նրանից պահանջում էին վճարել այն ծախքերի մի մասը, որ գործ էին դրել թօմասի սպանութեան համար: Պատրիարքը չէր ուզում վճարել, թէ ինքը եղեւնադրութեան պարա-զուխներից մէկն էր, և իր կնիքը ու ստորագ-րութիւնը դրել էր այն թղթի վրա, որով ուխ-

Համար: Ինչպիսիք ցոյց տուեց նա իրան քաղաքական գործունէութեան ասպարէզի վրա: Ոչինչով, բացի այն, որ նա հանգուցեալ կոմս Արնիմի պաշտպանութիւնը մէկն էր, իսկ Հարրի Արնիմ իշխան Բիսմարկի ոխերիմ թշնամին էր, որ նրան սաստիկ ատուժ էր և կորուստ պատճառեց:

Ընտրողները հրովարտակին այդպէս պատասխանեցին իսկ լայնատաղը ինչ արաւ: Անցեալ հինգշաբթի, Նոյեմբերի 24-ին կայացաւ լայնատաղի առաջին նիստը, որ նուիրված էր ընթացող գործերին: Հերթական հարցը կառավարութեան առաջարկած բիւդժետի առաջին քննութիւնն էր: Այստեղ բիւդժետի մասին վիճաբանութիւններ լինում են կուսակցութիւնների հայտնաբերող քաղաքականութեան վրա բացատրելու համար: Նրանք կարծես փոխարինում են այն ռեզերվները, որոնցով սահմանադրական միւս երկիրներում պարլամենտները պատասխանում են գահական ճառերին: Այս անգամ լայնատաղը անսպասելի դժուարութեան հանդիպեցաւ: Գահական ճառը չէր կար, այլ միայն կայսերական հրովարտակ, որ, ինչպէս և թագաւորի անձնաւորութիւնը, քննութիւնից բարձր է: Մի և նոյն ժամանակ չէր պատասխանել հրովարտակին, ի նկատի առնելով նրա բովանդակութիւնը, որ ցոյց էր տալիս կառավարութեան յամառութեամբ մերժված հարցերի վերաբերութեամբ, կը նշանակէր առանցքաւոր յաղթված համարվել, հրաժարվել ընդդիմադրութիւնից: Այդ գործը անկարելի համարվեցաւ մանաւանդ այն պատճառով, որ ոչ մի կուսակցութիւն, մինչև անգամ յետադիմականները չէր կամեցան ընդունել հրովարտակի ամբողջ նախագիծը: Բոլոր կուսակցութիւնների խումբերի ներկայացուցիչները ընդհանուր խորհուրդ կազմեցին և հետևեցին հետևեալ միջոցը, որովհետև թագաւորի հրովարտակը խմբագրված է պետա-

կան կանցլերից, ուրեմն նա պարունակում է ոչ թէ միայն կայսրի անձնական կամքը, այլ և կառավարութեան նախագիծը, որ միշտ կարելի է քննութեան ենթարկել: Այդ վճիռը ներկայացվեցաւ լայնատաղի նախագահական բիւրօին, որ իր կողմից նրան կատարելագոյն իրաւացի ծանուցեց: Այսպիսով բոլոր կուսակցութիւններ իր համաձայնութեամբ հրովարտակին սովորական կառավարչական գործի բնուրուութիւն տրվեցաւ: Ընդդիմադրական կուսակցութիւնը անյապող օգուտ քաղեց այդ հանգամանքից: Նոյեմբերի 24-ի նիստին առաջինը խօսեց Եւգենի Բիսմարկ, այդ մշտական ճառախօսը բիւդժետի քննութեան ժամանակ, որովհետև նա առաջադէմների գլխաւոր առաջնորդն է և շատ պատուական Ֆինանսիստ, որին անկարելի է շփոթել Ֆրագլերով և թուանշանների դասաւորութեամբ: Բայց այս անգամ նա չէր խօսեց բիւդժետի մասին, այլ ուղղակի անցաւ հրովարտակին, որ և քննեց մանրամասնորէն և անխնայ: Պահպանողականները չբիւդժետեան, որովհետև նրանք չէին սպասում այդպիսի արագ և եռանդաւոր յարձակման: Ինչպէս ես արդէն հաղորդել եմ, պահպանողականների մէջ չէր կայ գոնեա մէկ տաղանդաւոր մարդ և պատահմամբ նրանց առաջնորդ դարձած Մենիգեբորգե ամենից քիչ ընդունակ է առանց նախապատրաստութեան վիճել Բիսմարկի նման փորձված պարլամենտական գործիչի հետ: Մենիգեբորգե հրաժարվեցաւ խօսքից, յուսով, որ հարցը կը յետաձգվի կամ թէ չէ կը պատասխանի կենտրոնի առաջնորդ Վինդհորստ, որ միակ ընդունակ է մաքառել Բիսմարկի դէմ: Բայց Վինդհորստ բոլորովին մտադիր չէր առանց ակնկալութեան օգնել իր պահպանողական բարեկամներին: Ընդհակառակը նրան շահաւէտ է ցոյց տալ նրանց անընդունակութիւնը:

Նա էլ հրաժարվեցաւ խօսքից և միւս ճառախօսներն էլ ի հարկէ հետեւեցին նրա օրինակին, ասելով, թէ նրանք ոչինչ պատասխան չունեն Բիսմարկի ճառին, իսկ Բայնստագի նիստը ի գուր երկարացնել հարկաւոր չեն համարում: Պահպանողականների կրկու անգամ առաջարկված յետաձգութիւնը մերժվեցաւ և այդպիսով նախագահը ստիպվեցաւ վիճաբանութիւնները վերջացած յայտնել: Ուրեմն պահպանողականների վարմունքի շնորհիւ Բիսմարկի խիստ քննողական ճառը ստացաւ ամբողջ լայնատաղի պատասխանի ձև կայսերական հրովարտակին:

Ընդդիմադրական կուսակցութիւնը շտապեց օգուտ քաղել այդ հանգամանքից: Առաջադէմների ընտրողական մասնաժողովը վճռեց տպել Բիսմարկի ճառը մի քանի հարկի հազար օրինակներով հետեւեալ վերնագրով. Առաջադէմ կուսակցութեան պատասխանը Բիսմարկի ճառին, որ պարունակում էր կայսերական հրովարտակի մէջ և այդ ձևով տարածել գաւառական քաղաքներում, գիւղերում և ծախել հատը 10 պֆեն. (5 կ.)։ Այս պատասխանի ամենամեծ տարածումը, ամփած է մասնաժողովի հրատարակութեան մէջ, անհրաժեշտ է այն պատճառով, որ մինիստրը կարգադրել է կայսերական հրովարտակը կախել ամեն տեղ, ուր հաւաքվում է ժողովուրդը: Կառավարութիւնը անչափ բարկացած է այդ յանդիմութեան առիթով, բայց ոչինչ չէ կարող անել, որովհետև մի նիստի ամբողջ հաշիւը դուրս առանձին ճառի տպագրութիւնը արգելող օրէնքը անգործադրելի է այս դէպքում, քանի որ լայնատաղի ամբողջ նիստին միայն մի ճառ է արտասանած:

Բայց դեռ այդ ոչինչ է, քանի որ ընդդիմադրականները աշխատում են, հետե-

ւապէս սովորական գործ է, թէպէտ այդպիսի փաստերը առանձին համարձակութիւն չունեցող այստեղի հասարակութեան համար անցնում են և սովորականի սահմանները: Բայց Նոյեմբերի 24-ի նիստի ժամանակ այնպիսի երևոյթներ նշմարվեցան, որոնք աւելի նշանաւոր են, քան թէ կայսերական հրովարտակի քննադատութիւնը: Իր ճառի մէջ Բիսմարկ ի միջի այլոց ասաց. «Մեզ մեղադրում են, որ մենք անբարեխիղճ ցոյցեր ենք անում: Մենք մեր անողութեամբ շատ ենք պարտական կառավարչական կուսակցութեան չափազանցութիւններին, կիսապաշտօնական մամուլի անվայել վարմունքին... Այս խօսքերի արտասանութեան ժամանակ այն ժամանակից, ինչ Գերմանիայում պարլամենտը դուրսբերելու ունի, պահպանողականները հաւանութիւն տուին ընդդիմադրական կուսակցութեան ճառախօսին...» «Այդպէս է», «Ճշմարիտ է», բողոքովին ուղիղ է», բացականչում էին պետական կանցլերի կողմ նախիցները և երկմտի կերպով նայում էին Շաֆօկիներին: Միւս նշանաւոր երևոյթը միացեալ խորհրդի անդամների խորը լուռութիւնն էր: Շատ հասկանալի և բնական է, որ մինիստրական նստարանները լցնող կառավարչական գործակատարներից ոչ մէկը չէր համարձակվեցաւ գոնէ մի բառով պաշտպանել կառավարութեանը: Իշխան Բիսմարկ այնքան աշխատել է հեռացնել իրանց փոքր ի շատէ ընդունակ մարդկիւնաց, ձգտել է շրջապատել իրան անխօս ծառաներով, որ կրիտիկական րօպէներում նա ոչ թէ միայն պաշտպաններ, այլ և օգնականներ չէ ունենում: Նոյնպէս պատահում է չէ և այն հանգամանքը, որ միացեալ խորհրդի անդամները, որոնք բացի իշխան Բիսմարկից բոլորն էլ ներկայ էին, ոչ մի խօսքով չէր պաշտպանեցին «միացեալ կառավարութիւնների որոշած» նախագիծը: Նրանց ուղ-

տել էին Թոմասին ոչնչացնելու: Պատրիարքը կամենում էր իր մաս սպանութեան ծախքը բաժանել Կ. Պօլսի հինգ եկեղեցիների վրա, որ ժողովուրդը վճարէ: Նրան պատասխանում էին. մենք ինչով ենք մեղաւոր, դու մի պատրիարք ես սպանել տուել քո շահերի համար, գիտ ինքդ տուժիր ծախքերը: Ժողովուրդի խօսքը իրաւացի էր: Նրուսաղէմի Աստուածատուր պատրիարքը սպանել տուեց Թոմասին գլխաւորապէս այն պատճառով, որ նա սուլթանի հրամանով գերիշխանութիւն էր ստացել Նրուսաղէմի պատրիարքի վրա: Այդ խռովութիւնների պատճառով մի քանի տարի յուզման մէջ էր Կ. Պօլսի հայ հասարակութիւնը: Հակառակութիւնը օր ըստ օրէ սաստկանում էր. իւրաքանչիւր կողմը կայաւորով գրաւում էր թիւրքաց պաշտօնատարներին դէպի ինքը, հակառակորդին նկուս անելու համար: Նրեմն մի կողմի, երեմն միւս կողմի մարդիկը բանտ էին դրվում, ի հարկէ, ազատվում էին գրաւեալ կաշառքով: Կռիւր հանդարտվում էին ժամանակ, երբ Նրուսաղէմի պատրիարքը վերջապէս յանձն առեց վճարել իր մասը, որ գործ էր դրված Թոմասի սպանութեան համար:

Վերոյիշեալ աղետալի պատմութիւնը մի փոքրիկ կտոր է միայն Նրուսաղէմի վանքի ընդարձակ պատմութիւնից, որ բովանդակում է իր մէջ շատ այդպիսի և դրա նման անցքեր, որ կարողացողի վրա սարսափ են ձգում: Անկարելի է երևակայել, թէ ինչ սրտի, ինչ հոգու տէր են եղել այդ մարդիկը, որ Յիսուս Գրիստոսի նուիրական տեղերի անունով ահագին գումարներ էին հաւաքում ազգից, լցնում էին մահմտական պաշտօնականների քանակները, մինը միւսի ձեռքից Նրուսաղէմի պատրիարքութեան աթոռը կողքելու համար: Իսկ վանքը թողնում էին աղքատութեան մէջ, կրկին դիմում էին ազգին, որ նրա պարտքերը վճարէ: Այդ մասին բաւական է կարդալ մեր յիշած Նիդաղար անթափեցու պատմութիւնը, որը երկու պղնձէ թաղարկների մէջ գտաւ Նրուսաղէմի Աստուածատուր ցէք, ազատեցէք, Նրուսաղէմ գերութեան մէջ

պատրիարքի թագաւոր զանձը: Այդ գումարը նա ծախսեց Նոյն իսկ Աստուածատուր պատրիարքին (Թոմասի սպանել տուողին) աթոռից ձգելու և, ինքը նրա տեղ պատրիարք դարձաւ: Գրանով չէր բաւականացաւ: Նիդաղարը: Նա ահա գին կաշառքներ տալով սուլթանի մեծ վեզիրին, կաթողիկոս ընտրվեցաւ, նստեց Նրուսաղէմում հակառակ Սիւ և Ելմիսանի կաթողիկոսարաններին: Պէտք է ի նկատի առնել, որ Նիդաղարի այդ փառասիրական վարմունքը բոլորովին ընդդէմ էր մեր եկեղեցու վարչութեան հնաւանդ սովորութիւններին, որովհետև Նրուսաղէմում միայն պատրիարքներ կարող էին իշխել և ոչ կաթողիկոսներ:

Նրեմն Նրուսաղէմի վանքում այն աստիճան անիշխանութիւն էր տիրում, որ իրանք միաբանները, կամ նրա կառավարիչները սկսում էին անխնայ կերպով ամեն ինչ վատնել: Ես Գրիգոր պատրիարքի օրերում: Այդ ժամանակ անկարգութիւնը իր վերջին ծայրն էր հասել: Վանքի արծաթեղէնները, սրբազան անօթները, խօսքերը, սրբոց մասունքները... բոլորը վաճառվում էին շուսյլ միաբանութեան ծախքերը լցուցանելու համար: Նրե ամեն ինչ սպառվեցաւ, սկսեցին ահագին տոկոսներով պարտքեր անել և Նրուսաղէմի նուիրական տեղերը, մինչև անգամ սուր Թակոբայ վանքը մահմտականների մօտ գրաւ դնել: Պարտքերը այն աստիճան աճեցին, որ հասան 800 շաւակ: Մահմանականները կամենում էին վաճառել հայոց սրբավայրերը, որ իրանց տուած փողը ստանան: Երբ արեղաները լաւ մուշտարի էին հայոց տեղերը գնելու համար, Այդ միջոցին Նոյն ժամանակվայ Նրուսաղէմի Գրիգոր պատրիարքը, որ կուլեցաւ չղթ աշակերտ (գինձերէլ), պարանոցին երկաթէ հաստ չղթայ ձգելով, և երկաթէ կողպէքով կողպելով, կանգնած էր Կ. Պօլսի եկեղեցիների դռների առջև, և արտասուք աչքերում աղաղակում էր ժողովուրդին. «ազատեցէք, ազատեցէք, Նրուսաղէմ գերութեան մէջ

է: Այդ չղթան նա ամբողջ ութն տարի կրում էր իր պարանոցին, մինչև կարողացաւ հայոց բարեպաշտ ժողովուրդից հաւաքել 800 շաւակ: Իսկին, վճարել մահմտականների պարտքերը և ազատել Նրուսաղէմ գերութիւնից...»

Այսպիսի օրինակները շատ անգամ են պատահել: Նրուսաղէմը պարտքի տակ է ընկել, ազգը նրա պարտքը վճարել է, և այդ անտանելի դրութիւնը շարունակվել է մինչև մեր օրերը: Բայց կիթ այդ պարտքերի բուն արմատը քննելու լինես, կը տեսնես, որ ծայրը հասնում է մինչև այս և այն արեղայի դրպանը:

Նրուսաղէմի վանքը եղել է և է հայերի համար երկպառակութեան աղբիւր, մի տեսակ կռիւի բռնի, որտեղից խռովութիւնները երբեք պակաս չեն եղել:

Բաւական չէր իրանց մէջ ունեցած կռիւները, որոնք ազգի համար խիստ թանգ էին նստում, Նրուսաղէմի հայոց վանքի միաբանութիւնը, համարեա այդ վանքի հիմնված օրից մինչև մեր ժամանակը, անընդհատ կռիւներ է ունեցել յայն և լատին կրօնաւորների հետ: Համարեա ամեն տարի սուր Գարուլթեան տօնի օրում արեղաները միմեանց գլուխը ջարդել են և նրանց հետ խառնվել են երկու կողմերի դաւաճութիւններին պատկանող ուխտաւորները: Ամեն անգամ, երբ ուխտաւորը վերադառնում է, առաջին հարցը, որ առաջարկում են նրան, այդ է վանքում: Հայս տարի կռիւը ինչպէս վերջացաւ, եւ կռիւը ինչից էր ծագում, հայերը կամենում են առաջ իրանք պատարագել, իսկ յայնները արգելում են: Նոյնը միջին են կամենում, հայերը արգելում կամ յայնը աշխատում է միւսի տօնը խանգարել, և այլ այսպիսի պատճառներ, եւ այդ բոլորը կատարվել է սեր և խաղաղութիւնը քարոզող Փրկչի գերեզմանի վրա:

Թիւրքաց կառավարութիւնը միշտ ներողամտ աչքով է նայել այդ անկարգութիւնների վրա, և չէ նայելով դարեւոր բողոքներին, մինչև այսօր Նրուսաղէմի մէջ գտնված զանազան դաւանութեան պատկանող կրօնական միաբանութիւն-

ների վեճերին մի վերջական որոշում չէ տուել, որպէս զի նրանց մէջ անբաւականութեան առիթ չէ մնար: Եւ այդ պահանջում էր Նոյն իսկ կառավարութեան շահը, նախ այն պատճառով, որ հաշտութիւնը քրիստոնեայ հպատակների մէջ նրան շատ օգտաւէտ չէր կարող լինել, երկրորդ, կառավարութեան պաշտօնականները մեծ շահեր էին ստանում յիշեալ կռիւներից: Նրուսաղէմի հայոց պատրիարք Գրիգոր մոկացու օրերում միանգամ չձեռադառնել պատահեց, այսինքն գատիկ խոտորում եղաւ, հայերը պէտք է յոյներից մի օրով առաջ կատարէին գատիկ տօնը: Երբեք կաշառք տալով տեղային փաշային, արեղեցին: Այդ տեսնելով հայոց պատրիարքը, ստիպվեցաւ 20 հազար դահեկան կաշառք տալ Նոյն փաշային, որ թոյլ տրվի գատիկ տօնը հայոց տօնացոյցի համեմատ կատարել:

Թողնեմք անցեալը, թողնեմք պատմութիւնը, եթէ կարգաւոր լինեք մեզ մօտ ժամանակների Կ. Պօլսի հայոց պարբերական թերթերը, նրանց մէջ կը գտնենք հարիւրաւոր օրինակներ այն սարսափելի երկպառակութիւնների, որ կատարվել են Նրուսաղէմի վանքում: Իսկ այդ անվերջանալի կռիւները, այդ երկպառակութիւնները մեզ համար շատ թանգ են նստել, մենք թողել ենք մեր բուն ազգային հոգսերը, սկսել ենք մտածել Նրուսաղէմի վանքի վրա, մենք վատնել ենք մեր արծաթը, որի իւրաքանչիւր կօպկել խիստ մեծ արժէք ունէ մեր ազգային աւելի անհրաժեշտ պէտքերի համար: Կ. Պօլսի պատրիարքարանը, Կ. Պօլսի մեր ազգայինները տարիներով զբաղված են եղել և այժմ զբաղվում են Նրուսաղէմի վանքով:

Եւ վերջացնում եմ, այսքանը բաւական համարելով առ այժմ, քանի որ «Մշակի» նախընթաց համարներում ես տպված եմ մի հետաքրքիր կտոր Նրուսաղէմի վանքի կեանքից:

դակի պարտականութիւնն էր գտնէ մի քանի բառ արտասանել, քանի որ նկատեցին, թէ գործը ինչպիսի կերպարանք է ստանում: Բայց նրանք լռում էին և ներկայ եղողները նկատում էին, որ նրանք ծաղրում էին ամաչած պաշտօնողականներին:

ԻՏԱԼԻԱ

Նոյեմբերի 26-ին կայացաւ իտալական պատգամաւորների ժողովը, ուր մինիստր Մանչինի, պատասխանելով իրան առաջարկված գանադան հարցմունքներին, պատասխանեց: «Ընդունելով մինիստրութիւնը, մենք գտանք իտալիայի արտաքին գրութիւնը խախտված, գտնվելով Մարսելի և Տունիսի անցքերի պատճառով Ֆրանսիայի հետ թշնամական յարաբերութիւնների մէջ: Մեր յարաբերութիւնները Գերմանիայի հետ, թէպէտ և բնական էին, բայց, այնուամենայնիւ, մէկ անբացատրելի կասկած էր տիրում մեր մէջ: Այդ պատճառով մինիստրութիւնը իրան նպատակ դրեց նախ ցրվել այն կասկածը, որ ունէին իտալիայի երեակայական դիտարկութիւնների մասին: Երկրորդ՝ իր հարեան ազգերի հետ բարեկամական և խաղաղ յարաբերութիւններ հաստատել, մի և նոյն ժամանակ առաջ գնալ, կատարել համաձայնութեամբ այն պետութիւնների հայացքների հետ, որոնք աւելի հետաքրքրված են խաղաղութիւնը պահպանելու մէջ և որոնց շահերը աւելի համեմաշխ են մեր սեփական շահերի հետ: Երրորդ, ներկայացուցիչ դառնալ Գերմանիայի և Աւստրո-Սերբիայի մեծ շահերի, և նոյնպէս պաշտպան այն քաղաքականութեան, որի նպատակն է խաղաղութիւնը պահպանել, իտալացիների և գերմանացիների մէջ եղած դարեւոր թշնամութեան վերջ դնել, նորից եղբայրանալով: Վերջապէս, իտալական ժողովրդի միաձայն ցանկութիւնը համոզեց մեզ, որ ժամանակ է արդէն հեռացնել այն կասկածը, որով վերաբերվում էին դէպի մեզ Վիեննան և Բեռլինը և բարեկամութիւն հաստատել երեք ժողովուրդների մէջ:

Մենք Վիեննայի հետ սկսեցինք բարեկամանալ այն ժամանակից, երբ համոզվեցանք, որ Աւստրիան կատարելապէս բաժանում է մեր ցանկութիւնը: Վիեննայի տեսակցութիւնը մեծ աջողութիւն ունէր և շատ սիրով է ամրապնդված: Մեր յարաբերութիւնները Գերմանիայի հետ շատ լաւ են և վերջին ժամանակները աւելի լաւացան:

Գրանից յետոյ Մանչինի հաղորդեց զեսպանների հաշիւները, որոնք ապացուցանում են, որ իշխան Բիսմարկի Աւստրիայի հետ բարեկամութիւնը համազօր է համարում Գերմանիայի հետ բարեկամութեան: Իսկ ինչ վերաբերում է վերջին ժամանակ իտալիայի մասին Բիսմարկի յայտնած մտքերին, Մանչինի ասեց. «Հարկաւորութիւն չէր կայ հերքել այն համոզմունքը, իբր թէ իտալական միապետութեան և թագաւորական ցեղին վտանգներ են սպառնում: Հասարակական ինքնաձանաչութիւնը կարող է մեզ վկայել, որ, շատ կարելի է ոչ մի երկրի մէջ միապետութիւնը և թագաւորական ցեղը չունեն այնքան խոր արմատներ, ինչպէս իտալիայում, ուր, որպէս և Գերմանիայում, թագաւորող ցեղը նշանաւոր ծաւալութիւններով կապեց իր վիճակը ժողովրդի գործի հետ»:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍԻՍԵՑ

Կ. Պոլիս, նոյեմբերի 20-ին

Օրվայ մի տխուր անցք Ներսէս պատրիարքի հրաժարական տալն է այս անգամ իրան Սայիդ փաշային: Այսօր, կիրակի լինելով բնական է, որ յրազիրները չը կարողացան թնդալ այս եղելութիւնը, բայց վաղուանից օրվայ գլխաւոր անցքը այս կը համարվի:

Հրաժարականը տալուց առաջ, ասում են պատրիարքը ի միջի այլոց Սայիդ փաշային զանգառով է այն հազար ու մէկ հալածանքների մասին, որ կրում է հայ ազգը զուգէ նորա անձնաւորութեան պատճառաւ, վասն որոյ իր ժողովրդի մեղքը իր վրա չառնելու համար, հայոց պատրիարքը տալիս է իր հրաժարականը: Այս ասելով հանում է գրպանից պատրաստ հրաժարականը և տալիս է Սայիդին: Սայիդ փաշան ասում է պատրիարքին «Ինչու էք սպասում, ձեր սրբազնութիւն, որ ձեր օրով վերջնայ հայոց հարցը, որով մի մեծ փառք ստացած կը լինէք...» Պատրիարքն Ներսէսը պատասխանում է. «այո, իրաւունք ունէք, որ իմ ազգի փրկութիւնը դժբախտի հալածանքներից իմ առաջին և վերջին փառք կը լինէր, բայց որովհետեւ այդ փառքին արժանանալու յոյս ես բնաւ չունեմ, վասնորոյ կը ցանկանամ, որ այդ փառքը դուք ստանաք զուգէ ձեր օրով ազատելով տերութեան երեք միլիոն հաւատարմագոյն հպատակներ այն տանջանքներից, որ եօթը դար է շարունակվում...» Սայիդ փաշան խնդրում է պատրիարքին որ մի քանի օր սպասէ իր հրաժարականի պատասխանին: Պատրիարքը ասում է, որ իր համար վայել չէ տեսնում իր մի անգամ տուած որոշումը կրկին փոխել, այս խօսքով դուրս է գնում:

Հիմա մնում է, որ պատրիարքի հրաժարականը վաւերացվի նոյնպէս և ազգային ժողովից, որի մէջ քանի որ կան իսլամական եկեղեցիներ, Մերեմ-Գուլի, Եւսուֆեան, Բեքեան և Փափազեան, հրաժարականը վաւերացնելու համար ոչինչ խոչընդոտ չէ կարող լինել, միայն երկու կայ ժողովրդի կողմից, որովհետեւ ժողովրդի արամազրութեան այսպիսի մի խոշոր ժամանակ, Ներսէսի գործից հեռանալով ժողովրդի գլուխը կարել ասել է: Սպասե՛ք ու տեսնե՛ք:

Լսածիս համեմատ լորդ Կիւֆերին և Բուրկ վաղը տեսակցութիւն են նշանակած պատրիարքին, երեք հրաժարականի պատճառով է, ի հարկէ պատրիարքը չի զլանայ հարկաւոր եղածից աւելին ասել Անգլիայի ներկայացուցիչներին, որոնք փոխանակ պահանջներ անելու թիւրքալից, սկսել են կրկին սաղաւթալ անել նորա հետ:

Ասեցի որ պատրիարքի հրաժարականի վաւերացման ազգային ժողովի կողմից պիտի դիմադրէ հասարակ ժողովուրդը. այդպէս էլ եղաւ. երբ լսեց այդ ժողովուրդը պատրիարքի հաստատ դիտարկութեան մասին հրաժարվել իւր պաշտօնից, երկու օրուայ մէջ տասը հազարի չափ ստորագրութիւն ժողովից մեծ մասամբ գաւառացի հայերի մէջ, որոնք լսել անգամ չեն ուզում որ և է ուրիշ պատրիարքացու մարդու վրա, բացի Ներսէսը: Լսածիս համաձայն յուզմունքը այնչափ մեծ է և ընդհանուր, որ Ստեփան Փափազեան անուն դաւաճանին իմաց է տրված, որ նորա վիճակը որոշված է, եթէ ազգային ժողովի միջ թիւթը տայ...

Ներսէս պատրիարքի հրաժարականը այս քանի օրերս թուրք և ֆրանսիական լրագրերի յորդածներից զլխաւոր նիւթն է: Phare du Bosphore և Stamboul իւրաքանչիւր իր կողմից մի քանի օր շարունակ առաջնորդող յորդածներ են նուիրում այդ հրաժարականին «La demission de Monseigneur patriarche Nerses» մեծատառ վերնագրով: Այսօրվայ Վաղթի անգամ, որ կարգադրելու տուեցի մի բարեկամ, չփոխված է Ներսէսի առած որոշման վրա այսպիսի մի փափուկ ժամանակ: Ինչպէս երևում է, թիւրքերը բաւական ճշում են զգում օտար տէրութիւնների ներկայացուցիչներից հայոց հարցի դանդաղ ընթանալու պատճառով, որի վրա յիշած և հայոց պատրիարքը հրաժարվում է իր պաշտօնից: Ընդհանրապէս Ներսէսի հրաժարականը շատ պիտի ցնցէ մտքերը և զարկ տայ հայոց հարցին, վասնորոյ նա շատ արդիւնաւոր և նպատակայարմար մի որոշում կարող է համարվել, այն պայմանով միայն, որ այդ

հրաժարականը վերջ է վերջոյ չի ընդունվի, այլ միայն իր ցանկալի օգուտը արտադրէ:

Պատրիարքի վերջի տեսակցութիւնը և ունեցած խօսակցութիւնը Սայիդ փաշայի հետ այս քանի օրերս Կ. Պոլիսի բոլոր շրջանների հիացման նիւթն է: Յայտնի է, որ շատ համբերող և շատ բարի մարդու կատարութիւնը թէպէտ հազիւ կը գայ, եկած ժամանակը խիստ բուռն կը լինի. այդպէս էլ եղել է Ներսէսի հետ խօսակցութիւնը: Նա այնչափ սկսել է իրան մոռանալ, որ բերանը փրփրած վեր է կացել տեղից և բղաւիլ ասելով. «Գիտէ՞ք հիւքեր են թիւրքիային հիմա ծառայողները, ձերը վստահութիւն»: Սայիդը հետաքրքրութեամբ հարցրել է. «Թիւրքիային ծառայողները, հիմա չափ կ'ը խաֆիէ մամուլի են, որոնք են» ասել է Ներսէսը. «Եթե՞նք, ինչ էք ասում, բացատրեցէ՛ք ձեր միտքը» պահանջել է Սայիդը. «Այո, կրկնում եմ ասածս, թիւրքիային ծառայողները հիմա այն չափ կ'ը խաֆիէ մամուլի են, որոնք են, որոնցից շատերը պատրիարքարանից վերջված վատ և անպէտք արարածներ են»: Սորանով պատրիարքը պարզել է թէ ամեն բան խաբար անողը տէրութեան այն վատահոգի լրտես հայ էֆենդիներն են, որոնցից շատերն վզին տալով դուրս է անել տուել պատրիարքարանից Ներսէսը: «Չափիւ խաֆիէ մամուլի» նշանակում է սրբիկայ պաշտօնեաներ ծածուկ օստիկան ու թիւք, ВСЯКІЯ СВОЛОЧІ тайной ПОЛИЦІИ... Ահա այս СВОЛОЧЬ-ներն են հայ էֆենդիներից, որոնք թիւրքերին հանձնաւորում համար օրը հարիւր տեսակ բաներ բամբակով Ներսէսի մերթ անգլիստի ու թիւք են, մերթ ու ուստի ու թիւք են, մերթ յիշափոխական ու թիւք են վրա, գրգռում են թիւք կատալութիւնը հայոց պատրիարքի դէմ և կաշկանդում են հայոց հարցի լուծումը:

Չը նայելով պատրիարքի այսպիսի արտասովոր ասածանութեան, սակայն մեծ վրդով շատ քաղաքավարութեամբ և համեստութեամբ է վարել իրան իր վտացած հիւրի հետ, այնպէս որ ինքը իր ձեռքով ծխախոտ է ուրել պատրիարքի համար և իր ձեռքով սենեակի միւս անկիւնից սեղան քաշել նորա առաջը սուրճը գնելու համար:

Անտարակոյ Սայիդ փաշայ կը գնահատէր պատրիարքի անկեղծ խօսքերի արժէքը ի նպատակ նոյն իսկ թիւրքիայի բարօրութեան, որովհետեւ ինչպէս ասում են Ներսէսը շատ համոզել կերպով է բացատրել այս անգամ այն չարաքաղ հետեւանքները, որոնք պիտի յառաջ գան թիւրքիայի անտարբերութիւնից դէպի Հայաստանի բարաւթումը: Ահա այս դրութեան մէջ են գործերը, տեսնե՛ք թէ ինչ կասէ վաղվան օրը, երբ ոչինչ որոշման չը նախատեսնելով, մեր այստեղի կացութիւնը միայն անսենեկի է մնացած:

Իսրէն սրբազանը երէկ պատուելով ինձ իր այցելութեամբ ի միջի այլոց հաղորդեց, որ Փարիզի արխամիտ լրագրերից մինի խմբագրութիւնը, որ Saison լրագրի խմբագրութիւնն է, առաջարկում է նոյնպէս իր յօժարակամութիւնը միջամտել հայոց խնդրի մէջ, եթէ միայն արեւելքի մէջ բաժանորդագրութեան միջոցով որ և է ազդեցութիւն ստանալու յոյս ունենայ: Եւ խոստացալ այս մասին գրել Մշակին, որ անհ կատարում եմ, իսկ ինչ կը վերաբերվի այդ լրագրին, կամ մի այլ լրագրին, ինչպէս Փարիզի «Union Republicaine» է, կամ Լոնդոնի «Gazette Orientale» նոցա օգնութիւն մատուցանելու մասին, էլ ապահով ենք, որ «Մեղու Հայաստանին» եթէ ոչ ազգային համեմաշխութեան կամ աշխատանքի բաժանման տեսակետով, գոնէ լոկ յանուն հայ ու թիւք են կաշխատեց զոսանից մէկին նոյնը անել, ինչ արեց Մշակը «Journal d'Orient»-ի համար: Երբ խօսեցիք իր ժամանակին այս վերջի լրագրին օգնելու վրա, Մ. Մ. Մ. հազար ու մէկ պատրիարքների տակ, ինչպէս օրինակ «Journal d'Orient»-ը Փարիզի չէ հրատարակվում, բացի հայերին ուրիշ փոքրիկ ազգերին էլ է պաշտպանում, կամ խմբագրի բերանը ծուռ է և այն այսպիսի բաներ ասելով, իրան անկարող յայտնեց նորան օգնելու մէջ: Լաւ, դիցուք թէ բոլոր իր ասածները «Journal d'Orient»-ի համար հէնց իրաւացի էին, բայց հիմա ինչ ունէ ասելու «Saison»-ի, «Union»-ի, «Gazette Orientale»-ի մասին: Թող մէկին էլ ինքը օգնէ, եթէ միայն որ և է ազդեցութեան նշոյլ վայելում է հայ հասարակութեան մէջ, այսպիսի մի մեծ ազգային ճգնաժամին:

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Гласность» լրագրում կարդում ենք հետեւեալը: «Խօսելով ուսութիւնը բանակցութիւնների մասին Կ. Պոլսում, անգլիական «Times» լրագիրը ապացուցանում է, որ ուսումը և լեզուների առաջարկութիւնը, որ հակառակում է Բեռլինի կոնգրէսի վճռին, չը պահանջել ի հաշիւ պատերազմական վարձատրութեան ոչ հողային աւելացում, ոչ էլ առաջնութիւն պարտքերի վճարման մէջ Բ. Գրան ուրիշ ֆինանսական պարտաւորութիւնների շարքում, պահանջում է Եւրոպայի միջամտութիւնը և չէ կարող վճռված լինել մասնաւոր բանակցութիւնների միջոցով Կ. Պոլսի մէջ:

Բեռլինի լրագիրները հաղորդում են որ Ռուսաստանի և Գերմանիայի մէջ սկսված են բանակցութիւնները մաքսային տուրքերի պակասեցնելու մասին այն ապրանքների վրա, որոնք բերվում են Ռուսաստան: Ոմանք կարծում են որ հարցը վերաբերվում է միմիայն ոսկի դրամով մաքսային տուրքը վեր առնելու կանոնը վերցնելու մասին:

«Kölnische Zeitg» լրագրին հեռագրում են հետեւեալը: «Ռուսաստանը համաձայնվել է կիսով չափ պակասեցնել պատերազմական կոստւրիւցիայի գումարը, որ ստանալու ունի թիւրքիայից, տարեկան մէկ ու կէս պրօցենտ վճարով կապիտալից»: Յայտնի է որ մինչև այժմ Ռուսաստանը պահանջում էր թիւրքիայից 300 միլիոն ռուբլ պատերազմական կոստւրիւցիա, իսկ այժմ, ինչպէս հաղորդում են լրագիրները, այդ գումարի կէսը կը լինի, ուրեմն 150 միլիոն ռուբլ:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ա. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 4 դեկտեմբերի: Իշխան Ռուսոյ Հիւանդութեան պատճառով արձակվում է Նորին Մեծութեան Սեփական երկրորդ բաժնի գլխաւոր կառավարչի պաշտօնից: Ֆինանսների մինիստրութիւնը հաղորդում է, որ քաղաքային հասարակական բանկերի ենթադրած փոփոխութիւնը չէ վերաբերում գործող կանոնադրութիւնը: Փոփոխութեան նպատակն է փոխառութիւնը որքան կարելի է ապահով և մատչելի դարձնել:

Ա. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 5 դեկտեմբերի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. Փարիզի մէջ կազմակերպած Ֆրանսիական ընկերութեանը թոյլ է տուած նաեւ արգիւնաբերել Ղրիմի մէջ: Առաջարկված է մօտաւոր երկու տարիների ընթացքում կանուցանել հետեւեալ երկաթուղիները. Եւկատերինոբուրսկո-Տիւմենսկայա, արեւելեան Գոնեցկայա, Էլտոնսկայա և Պրիկոպսկայա, Բիւկովո-Բեռլինսկայա, Վիդուկո-Տուրուսկայա: Երկու զանաւորներ կը կառուցանին: Եթէ բաժանորդական ընկերութեանը յանձնվի, դա կը լինի նոր պայմաններով:

Ա. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 4 դեկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ռ. 50 կ, երկրորդ 90 ռ. 87 կ, երրորդ 91 ռ. 25 կ, չորրորդ 91 ռ., հինգերորդ 90 ռ. 75 կ, ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ռ., երկրորդ 217 ռ. 50 կ, արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. 12 կ, երկրորդ 90 ռ. 25 կ, երրորդ 90 ռ. 25 կ, ոսկի 7 ռ. 80 կ: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25,37 պէնս, Ամստերդամի վրա 128,37 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 216 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 267 ֆրանկ 62 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ИЗЪ ПАРИЖА

Отъ вновь прибывшаго изъ Парижа портного Теръ-Акопова.

Послѣ двухъ годичнаго усовершенствованія въ Парижѣ, я на дняхъ прибылъ въ Тифлисъ, открылъ магазинъ въ домѣ полковника Шахназарова, на Гановской улицѣ.

Принимаю всякаго рода мужскіе и дѣтскіе заказы, ручаюсь за аккуратность закройки и шитья. Последнѣйшимъ Парижскимъ модамъ.

Принимаю также заказы амазонокъ, для верховой ѣзды.

Портной Теръ-Акоповъ.

2—5

Գուրս եկաւ մամուլի տակից Սեդրակ Մանգինիանի հետեւալ աշխատութիւնը. «ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆ ԹՈՒՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ» Ծխական դպրոցների Զորքորդ տարուայ դասընթացը և միանգամայն Ա. Բ. և Գ. տարիների համար հրահանգ: Վաճառվում է բացառապէս «Կենտրոնական գրախոսութիւն» Գլին է 75 կոպէկ:

144 Արժուութեամբ գաւթէր 144 ամենաէական պահեստ մեքէլի և հայելիների:

ԲԱԹՈՒՄԻ
Կ Օ Մ Ի Ս Ի Օ Ն Է Ր
ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ
Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապաւարանք:
5—20

ԹԵՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖ-ԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**: Բացի այդ Անգլիական խանութը կը գտնուի **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ**:
90—100

Տրվում է վարձով ԵՐԿՈՒ ՍԵՆԵԱԿ. Հայոց բազարում ԴՕԿՏՈՐՍԿԻ փողի վրա № 2.
2—2

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խորհուրդը կողմանում յայտնում է, որ կանոնադրութեան §§ 16 և 18 հիման վրա ընկերութեան գործադարութիւնը բացի խորհուրդից յանձնվում է **և ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ** կողման և Անգլիական բոլոր քաղաքներում և տեղերում, երբ երկուսն առաջինների թիւը յայտնի տեղում հասնում է 15 և երբ իրանց գործողութիւնները սկսելու համար կը ստանան **ԽՈՐՀՐԴԻ ԹՈՅԼՏԻՈՒԹԻՒՆԸ**: Ցանկացողները բնաւ ընկերութեան տեղական վարչութիւններ կանոնադրութեան ձիւղ հիման վրա հրաւիրվում են այդ առարկայի մասին իրանց միջնորդութիւնները ուղղել ընկերութեան խորհրդին, որ գրանցվում է Թիֆլիսում, Ֆրէյլինսկայա փողոց տուն № 9, բնակարան **Ա. Ս. ԱՆՆՈՎԻ**, աւելացնելով անհրաժեշտ տեղեկութիւնները:

Ընկերութեան կանոնադրութիւնը տրված է «Кавказ» լրագրի №226 և 227 և «Մեղու Հայաստան» № 184 մէջ: Խորհուրդը անյապաղ կուղարկի կանոնադրութիւնը, հէկց որ նա կը պահանջի:

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ բան թէ ուրիշ տեղ. ԹԵՑ, կախա, ՇՕԿՈՒԿ, Բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բոկալներ, թէյամաններ, սուգոկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուսնալու ամաններ, ԿՈՂՊԷՐՆԵՐ, ԶԳԵՍԱԿԱՆՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, ԹՈՂԹ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԵՂՈՎԵՐՆԵՐ, մէջքափայտեր, կէտնակ, ԹԱՄԲԵՐ, սանձեր, ութներ, ՄԱՀձԱԿԱՆՆԵՐ, երեսբրդներ, թաշկինակներ, կանանց գուլթաներ, մարդկեանց գուլթաներ, տուպետի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնիզիա, խնայի զինի, պօրագէյն, խերես, կոնիակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵՐ** քանակութեամբ ծախվում է **ԹԵՑ**. պուզերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը **ԱՌԱՆՑ ԹՂԹԻ**:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և 204-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., Բէլգիական 4—34 ր., ԲՈՒԼԴՈԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆրդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, պուզներ կիսագնով, Ֆիլորտներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և Բէլգիական թիֆլիսում:
64—100

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 երրորդալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բոկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հատը, 10,000 պենակներ 5 կ., 5,000 շիւղիկ օրագէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և գրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 Փ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէօշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական Բէլգիական 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկո, ալբոմներ, ձմեռայն պալտոններ, գլխարկներ և ր., վարտիկներ, հագուստ կէս գնով: Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ: Նոյն տեղը ծախվում է ծախյին **ԽՈՏ** պուզը 2 ր. 50 կ.:
16—60

ՇԻՐԱԿ՝ տեղագրութիւն պատկերացոյց, հաւաքեց Հ. Ղ. Ա. Լիշան

Մանրամասն և հարգատ հետազոտութիւն Շիրակ գաւառի, գեղեցիկ քաղաքի և շքեղ պատկերներով զարդարուած: Հ. Ա. Լիշանի այս վերջին աշխատանքները ամենապատուաւոր և առաջնակարգ տեղ պէտք է բռնէ ոչ միայն նոյն հեղինակի մինչև այժմ լայն տեսած ընտիր երկասիրութիւնների մէջ, այլ և հայկական համայն գրականութեան ծանրակշիւ զարդերից մինը պիտի համարուի: Ամենայն հայ, որի համար թանկ է իր ազգի անցած ցնացած փառքերի նշխարների հետազոտութիւնն ու մշակութիւնը, ազանութեամբ պիտի ձեռք առնէ և իր գրասեղանի անհրաժեշտ սեպհականութիւններից առաջինը պիտի դարձնէ սրան: Գինն է 10 ր. ճանապարհի ծախքը 50 կոպ.

ԳՐԻՉ ԵՒ ՍՈՒՐ՝ պ. Մինաս Զերադի վերջին գրութիւնը առաջին հատորն է, որի մէջ յորինողը շարունակում է այն բանակովը գրաբարը պաշտպանողներին դէմ, որի սկիզբը ծանօթ է մեզ իւր գաղտնարակութիւն անունով գրեց: Բացի լեզուագիտական հակիրճ և ազդու յորուածներէ, այս գրքույկի մէջ ընթերցողը կը գտնէ տեղեկութիւններ նաև ուրիշ մի քանի հետաքրքիր հարցերի վերաբերութեամբ: Գինն է մէկ րուբլի. ճանապարհի ծախքը 10 կ.

վ ա ճ ա ո վ ու մ են

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

Գուրս եկան մամուլի տակից Գրիգոր Շահբուզիանի հետեւալ թարգմանութիւնները.
1) **ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՑ ՎԵՐԱՑ ՀԻՄՆՈՒԱԾ**. հեղ. Ժ. Բամբաստանի. Ֆրանսիական ձեռնարանի տեղամի. Ծնողաց և ուսուցչաց համար: Գինն է 40 կ. և 2) **ՊԱՊԻ ԶԵՆՈՑՆԵՐԸ**. մանկական վէպ անգլիական կենսաբից. Գինն է 10 կոպ. *). Գրավաճառներին և տանից աւելի գնողներին 20% զեղում: Վաճառվում են բացառապէս «Կենտրոնական» գրախոսութիւնը: Օտարաքաղաքացիք կարող են ուղարկի թարգմանչին դիմել այս հասցեով. Ե. Գ. Թիֆլիս. Գրիգորի Մախ-Բուդաչան. Կ. Դուխովնայի Սեմինարի Երեսեյն.

Նոյն տեղը վաճառվում է թարգմանչի հետեւալ աշխատութիւնը. «ՄՏԱԻՈՐ, ՖԻԶԻԿԱԿԱՆ և ԲԱՐՈՑԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ» հեղ. Զօն-Ստիւարտ Բէլկի. Գինն է 60 կոպ.

*) Յարգելի բաժանորդներս, որոնք 50 կոպ. են վճարել, կը ստանան երկու գիրքը միասին:

4—5

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐԲԵՐ	
Որոնք վաճառվում են ԶԱԲԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԱՍՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ	
1 Բագրատունի՝ ճան պատգամք. գինն է	25 կ.
2 Աղայանից՝ Անահիտ, հին գրքաց.	50 "
3 Թզուկ, թարգ. Տէր-Միքայելեանցի.	30 "
4 Աղբառ մանուկ կամ բարոյական վէպ.	20 "
5 Խախտարալ Սուրբուկեանցի.	50 "
6 Չորս մանրամէկ Տէր-Աւետիսեանի.	20 "
7 Հայերէն լոտո երկխաների համար.	50 "
8 Տէր-Արթուրից՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 "
9 Կոստանտինից՝ Գրաբառ բայերի խոնհարումը.	25 "
10 Թագուրեան՝ փորձ լեզուագիտական հետազոտութեան.	50 "

Եւս ստացուել է Բոստոնի Տէր-Արթուրեանցի 1882 թուի **ՕՐԱՅՈՑՑ**, գինն է 15 կոպ. գումարով ստանդներին զիջումն կը լինի:

Ա. ԱՄԵՆՈՐԵԱՑ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՅՈՑՑ 1882 Փ. Թ.

Մեծ թուանշաններով, հայկական կիւրակներին տպուած են կապուտ գունով. իսկ կոյսերական տօն օրերն տպուած են կարմիր գունով: Գրուած են Հայկական, Յուդիական, և Գրիգորեան բոլոր օրերը, ամիսները և թուականները: Լուսինը ևս գրուած է: Առ այժմ համառ. գրուած են: Օր պատմական անցքերի Հայոց: Մահ նշանաւոր անձանց Հայոց:

Օրացոյցի տարեալին զարդարուած է գեղաքանդակ գեղեցիկ պատկերներով, կրօնական և ազգային յիշատակարաններով. Գոստառակի, և Ս. Էջմիածնայ պատկերներով: Եւ այս բոլորը մի գարդ է ամեն մի հայու գրասենեակի համար:

Գ Ի Ն Ն Է 1 ՐՈՒԲԼԻ 25 ԿՈՊ.

Բ. ՄԵՃԱՂԻՐ ՕՐԱՅՈՑՑ 1882 Թ. Գ.
Բոլոր Օրհ. հրց. մի. հր. և այլն գրուած են կարգաւ: Հանդերձ «ԾԱԽՎԱԿ ԸՆՏԱՆԵԱՑ» է. տ. յաւելուածով: Սկզբում ԳԵՂԱՐԱՆԻԱԿ պատկերք:
Առաքինազոր հայրապետին մերոյ **ՍՐԲՈՑՆ ՎՐԴԱՆԻՍԻ** և կարուց պաշարման **ԼԱԶԱՐԵԱՆՑԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ**:
Գինն է մինչև 600 վերս 35 կոպ.: Իսկ նորանից բարձր՝ 40 կոպ.:

Գ. ՓՈՐՐԱՂԻՐ ՕՐԱՅՈՑՑ 1882 Թ. Գ.
Բոլոր Օրհ. հրց. մի. հր. և այլն գրուած են կարգաւ: Հանդերձ 2 գեղաքան. պատկերներով: **ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՍԿԱՆ ՆԵՐՍԷՍ** Ե. Կաթողիկոսն: Եւ **ԶԵՄՍ-ԲՐԱՅՍ** Հայաստանի Անգլիկանցին: Գինն է 15 կոպ.: Բոլոր 3 տեսակ օրացոյցներից գումարով գնողներին զիջումն կը լինի:
Խմբագիր և հրատարակիչ Արգար Գուլամիրանց
Ցանկացողք կարող են դիմել մեկ այս հասցեով. Ե. Գ. Զրիւան
Ա. Ս. Գուլամիրանց
Տիպոգրաֆիա Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.